Պարսիկս» (ՄՀԳ) հատվածները, Գ. Աբգարյանի ենթադրությամբ Սեբեոսի երկից մնացած հատվածներ են և առայժմ հայտնի ամենահնագույն նմուշը այդ երկից[13]: «Աբրահամու արքեպիսկոպոսի Եփեսացւոյ Ներբողեան յաւետիս սուրբ Աստուածածնին եւ միշտ կուսին Մարիամու» ներբողյանի մասին Բ. Սարգիսյանը գրում է. «Աբրահամ Եփեսացու գրուածներեն միակն է այս ճառս, հայկական թարգմանությամբ մեզ հասած»[14]: «Ի յիշատակի սրբոյն Անտոնի անապատականի, սրբոյն Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրի ասացեալ» ճառը «շարաբանությամբ կտարբերի երկու տպագրութենեն ևս, և կը թվի հնագույն և ընտրելագույն թարգմանություն»[15], «Սրբոյն Մահակայ հայոց հայրապետի» դավանական ճառը «հավանորեն Սահակ Գ կաթողիկոսին է... ինձ ծանոթ միակ օրինակն է այս, որ զերծ մնացել է նորամուտ խանգարումներե»[16]: Կան նաև ճառեր և վկայություններ, որոնք «շատ կեսերով ուշագրավ են»[17], կամ «ունեն զգալի տարբերություններ» տպագրություններից և այլն, ինչպես վկայում է Բ. Սարգիսյանը:

Ձեռագիրն սկսվում է Տօնականի կարգավորման, վերաբերյալ տեղեկությամբ: Ըստ այդմ, Տօնականի մեջ մտած նյութերն ու պատմությունները «ի մի կանոն կարգադրութիւն ժողովեալ առն աստուծոյ Սողոմովնի Մաքենացւոց ուխտին առաջնորդ, ի գաւառին Գեղաքունի, ի թուականին ՃՂԶ (747)»[18]: Այս բանը կրկնվում է նաև Առաքելոց վանքում գրված Հիշատակարանում: Ելնելով սրանցից, Ն. Սարգսյանը գրում է, որ «թվի թե երկրորդ օրինակ իցե կամ անընդմիջապես գաղափարյալ հառաջնո անտի, զոր Հավաքյալ կարգադրյաց Սողոմոն՝ Մաքենացոց ուխտին առաջնորդ, որպես վկայե և Օրբելյանն Ստեփաննոս»[19]: Նույն կարծիքին է Բ. Սարգիսյանը, որ այն գտնում է օրինակած «ոչ թե Սողոմոնի Տօնականեն ուղղակի, այլ անոր երկրորդ օրինակեն», որը նրա կարծիքով պիտի լինի «յամի տեառն 1104—5 գրված»[20], այսինքն Զորտուանել Մամիկոնյան իշխանի ժամանակ: «Ոչ մի հիմք չկա ընդունելու, թէ նրա օրինակը եղել է Սողոմոն Մաքենացու ձեռքով պատրաստած ձեռագիրը»[21], գրում է Գարեգին Հովսեփյանը: Ճիշտ է, որ նրա գաղափար օրինակը անմիջապես Սողոմոն Մաքենացունը չի եղել, սակայն այն անպայման սերում է Տօնականի՝ Մաքենացու խմբագրությունից, ինչպես ցույց են տալիս գրչի և հիշատակագրի վկայությունները: Տօնական, ճառընտիր, յայսմաւուրք և այս կարգի այլ մատյաններ խմբավորվելուց կամ կարգավորվելուց հետո միշտ հարստացվում ու լրացվում էին. որոշ վարքեր կամ ճառեր փոխարինվում էին ուրիշներով, բայց դարձյալ կոչվում էին կարգավորողի կամ խմբագրողի անունով, եթե այն խոշոր փոփոխությունների չէր ենթարկվել: Այսպես. 1536 թ. ընդօրինակած Յայսմաւուրքի հիշատակարանում, Գաբրիել գրիչը գրում է. «Եւ եղև գրաւորութիւն գրոցս... ի լաւ և յընդիր աւրինակէ, որ ասի Ծերենց, և այլ

13 Գ. Վ. Աբգարյան, «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 29:

14 Բ. Սարգիսյան, Յուցակ Վենետիկի, Բ, էջ 440:

15 Անդ, էջ 444:

16 Անդ, էջ 449:

17 Անդ, էջ 459:

18 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 3ա:

19 Բ. Սարգիսյան, Յուցակ Վենետիկի, Բ, էջ 469:

20 Անդ, էջ 435—436, 476:

21 Հիշատակարանք, Ա, էջ 722—3: